

ԳԵՎՈՐԳՅԱՆ Զ. Հ.

Կիլիկիայի հայկական պետության շուրջ երեքհարյուրամյա ժամանակաշրջանը բացառիկ փուլ է Հայոց՝ բազմադարյան պատմության ընթացքում: Հենց Կիլիկիայում հայկական իրականությունը հայտնվեց միջերկրածովյան մեծ ընտանիքում՝ արագորեն ներգրավվելով ծովային մշակույթի գունեղ աշխարհում: Կիլիկյան քաղաքներում հայ մարդը կողք կողքի ապրում էր իտալացիների, ֆրանսիացիների, իսպանացիների, հույների, հրեաների, ասորիների, արաբների և շատ այլ ազգերի ներկայացուցիչների հետ:

Կիլիկյան Հայաստանի համբավը Եվրոպայում այն աստիճան մեծ էր, որ նրա մասին գրում էին ոչ միայն Վիլհելմ Ռուբրուքը, Մարկո Պոլոն, Ջովաննի դե Սոնտեկորվինոն և բազմաթիվ այլ ճանապարհորդներն ու քարոզչական առաքելությունների ղեկավարները, այլ նաև վաղ Վերածննդի դարաշրջանի գեղարվեստական գրականության ներկայացուցիչները: Կիլիկյան Հայաստանի մասին առատ հիշատակություններ ունի Ջովաննի Բոկաչչոն հռչակավոր «Դեկամերոնում»: Իսկ Ջեֆրի Չոսերը «Քենտերբերյան պատմվածքներում» Կիլիկիայի գլխավոր նավահանգիստ Այասը հիշատակում է իր ժամանակի Արևելքի խոշորագույն քաղաքների կողքին՝

Միջազգային առևտրի զարգացմանը զուգընթաց Կիլիկիայի քաղաքներում օտարազգի վաճառականների թիվը գնալով աճում էր, և նրանց տարածքներ էին տրամադրվում՝ թաղամասեր ունենալու համար: Կիլիկյան Հայաստանում առևտրական գործունեություն ծավալած եվրոպացիների մեջ կարևոր դեր ունեին հարավֆրանսիական քաղաքներից ժամանած վաճառականները: Նրանք ներկայացնում էին գլխավորապես ներկայիս Ֆրանսիայի Պրովանս և Լանգեդոկ-Ռուսսիլոն երկրամասերի խոշորագույն քաղաքները՝ Մոնպելիեն, Մարսելը, Նիմը և Նարբոնան²: Թեև Նարբոնան, Մոնպելիեն և

¹ Geoffrey Chaucer. The Canterbury Tales, Oxford Un. Press, 1998, p. 4.

² 1213 թվականից Մոնպելիեն քաղաքը պատկանում էր Արագոնի թագավորությանը: 1276 թ. Արագոնի արքա Խայմե (Հակոբ) I Նվաճողը (1213-1276), իր թագավորությունից առանձնացնելով Բալեարյան կղզիները և հարավֆրանսիական մի շարք տարածքներ, ստեղծում է Մայորկայի թագավորությունը՝ այն կտակելով կրտսեր որդուն՝ Խայմե II-ին (1276-1311): Մոնպելիեն դառնում է Մայորկայի քաղաքական կենտրոնը: Եվ միայն 1349 թ. Մայորկայի թագավոր Խայմե III-ը (1324-1349) քաղաքը վաճառում է Ֆրանսիայի միապետ Ֆիլիպ VI-ին (1328-1350): Միևնույն ժամանակ, Նարբոնան Ֆրանսիայի թագավորության կազմում էր, իսկ Մարսելը՝ ֆրանսիական Անժու արքայատոհմի տիրապետության տակ (Abulafia D. The Levant Trade of the Minor Cities in the Thirteenth and Fourteenth Centuries: Strengths and Weaknesses // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XI, p. 185. English E. D., Encyclopedia of the Medieval World, New York, 2005, p. 466, 501).

Մարսելը XIII-XIV դդ. տարբեր պետությունների կազմում էին, սակայն նրանց վաճառականները միջազգային առևտրում լայնորեն համագործակցում էին միմյանց հետ³։ Ուշագրավ է, որ Ջիբալդոնե դա Կանալի վաճառականական հայտնի ձեռնարկի՝ Կիլիկյան Հայաստանին նվիրված մասում Մարսելը և Մոնպելիեն ներկայացված են առանձին բաժիններով⁴։ Իսկ մեկ այլ նման ձեռնարկի հեղինակ, ֆլորենտական Բարդի բանկային տան գործակալ Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտտին, որը 1330-ական թվականների կեսերին այցելել և պայմանագիր էր ստորագրել Կիլիկյան Հայաստանի արքա Լևոն Դ-ի հետ, եվրոպացի վաճառականների համար Կիլիկյան Հայաստանում սահմանված տարանցիկ մաքսատուրքի չափերը թվարկելիս, թեև հարավֆրանսիացիներին նախապես ընդգրկել է ընդհանուր «պրովանսցիներ» խմբում, սակայն հաջորդ բաժնում առանձին ներկայացրել է Նիմը, Մոնպելիեն և նույնիսկ՝ Մայորկան⁵։

Արդեն 1270-ական թվականներից սկսած՝ Այասում գրառված նոտարական սկզբնաղբյուրներում վկայություններ կան Կիլիկյան Հայաստանում հարավֆրանսիացի առևտրականների գործունեության մասին։ Այսպես, 1274 թ. փետրվարի 9-ին Այասում նարբոնացի Պեդրո Ջիմստալիսն իր հայրենակից Բեռնարդո դե Օդեից կոմսենդայի ներդրում ստացած անագը պետք է վաճառեր Ալեքսանդրիայում և, ապա վերադառնար Նարբոնա։ Ի դեպ, այս գործարքում, որպես վկա, հանդես է եկել Ջիբալդո Կոմես անունով մի մարսելցի։ 1279 թ. մարտի 4-ին Այասում կնքված գործարքի մասնակիցների թվում հիշատակված են պրովանսցի Ջիովաննի Բուքսոնոն և նրա բարեկամ Բելտրամե Ֆալիգեսը, որը ծագումով Կենտրոնական Ֆրանսիայի Ֆիգեակ քաղաքից էր⁶։ Մոնպելիեում 1301 թ. կազմված կոմսենդայի պայմանագրով՝ մոնպելիեցի վաճառական Բերտրանդո դե Օրլաքոն իր քույրեր Բլանկայից և Ջոաննայից ձեռք էր բերել գումար, որով գնված ֆրանսիական հագուստը պետք է վաճառեր Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում⁷։ Այստեղից մոտ 1295 թ. վենետիկյան 4 գալեր՝ Մարկո Բագիլիոյի հրամանատարությամբ, գալթել և թալանել էին մարսելցի վաճառական Պեդրո Կատրոլինգին պատկանող «Բոնդիմիր» անունով նավը, որն ուղևորվում էր

³ Levasseur E. Histoire du commerce de la France, t. I, Paris, 1911, p. 156-160; Pigeonneau H. Histoire du commerce de la France, t. I, Paris, 1885, p. 133, 222, 327; Germain A. Histoire du commerce de Montpellier, t. II, Montpellier, 1861, p. 3; Abulafia D. The Levant Trade of the Minor Cities, p. 185; Reyerson K. The Art of the Deal: Intermediaries of Trade in Medieval Montpellier, Boston, 2002, p. 40-41.

⁴ . E. Merchant Culture in Fourteenth-Century, Venice: "The Zibaldone da Canal", Medieval and Renaissance Texts and Studies, Binghamton, New York, 1994, p. 162.

⁵ Francesco Balducci Pegolotti. La Pratica della Mercatura, The Medieval Academy of America, Cambridge, Massachusetts, 1936, Kraus Reprint Co., New York, 1970, p. 60-62..

⁶ Balletto L. Notai genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989, A. N 19, 64. B. N 80, 92.

⁷ Reyerson K., նշվ. աշխ., էջ 40-41, Pryor J. Business Contracts of Medieval Provence: Selected Notulae from the Cartulary of Giraud Amalric of Marseilles, 1248, Pontifical Institute of Mediaeval Studies, Toronto, 1981, p. 77.

Բյուզանդիա: Նավի վրա եղել են ինչպես եվրոպական արտադրության, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում ձեռք բերված տարբեր ապրանքներ (բրդյա կտորեղեն, հայելիներ, ածելիներ, փարիզյան գոտիներ, սփռոցներ, անձեռոցիկներ, մոմ, օճառ, կոռիկոսյան գորգեր, բամբակ և այլն): Քանի որ ծովահենները գործողությունն իրականացրել էին Կիլիկյան Հայաստանի ջրային տարածքներում, ուստի մարսելցուն պատճառված վնասների հատուցման նպատակով նույն թվականի սեպտեմբերի 2-ին կազմվել է իրավական գործ: Ի դեպ, այս փաստաթղթում հիշատակված է նավի գրագիր նարբոնացի Պետրո Դանիելիսը (*Petrus Danielis de Narbona, scribanus olim dicte navis*)⁸: Մոնպելիեի առևտրի պատմությունը հետազոտող Կ. Ռեյերսոնը, ուսումնասիրելով այդ քաղաքում գրառված նոտարական գործերը, փաստում է, որ Կիլիկյան Հայաստանը և Այասը մոնպելիեցի վաճառականների առևտրական գործունեության իրականացման կարևոր նպատակավայրերից էին: Մասնավորապես, միայն 1330-1344 թթ. Մոնպելիեում վաճառականներն ամենից շատ ներդրումներն արել են դեպի Ալեքսանդրիա, Կիպրոս, Ռոմանիա և Կիլիկյան Հայաստան ուղղված առևտրական ձեռնարկումներում⁹:

1296-1310 թթ. Կիպրոսում գրառված նոտարական հարյուրավոր գործերի մեջ առանձացրել ենք որպես Նարբոնայի և Մարսելի հյուպատոսներ հանդես եկած բոլոր անձանց: Այսպես, որպես Նարբոնայի հյուպատոսներ ներկայացել են Բեռնարդո Ֆայդիրը (1299 թ. մարտի 6), Բեռնարդո Կապոդոլատոն (1299 մայիսի 23) և Բեռնարդո Ֆաքսիտը (1300 թ. հոկտեմբերի 14): Ընդ որում, առաջին երկուսի տիտղոսներում նշված չէ աշխարհագրական որևէ ցուցիչ, այլ պարզապես գրված է «Նարբոնայի հյուպատոս» արտահայտությունը: Եվ միայն Ֆաքսիտի դեպքում է ընդգծված, որ նա Նարբոնայի հյուպատոսն է եղել Ֆամագուստայում: Հարյուրավոր փաստաթղթերում որպես Մարսելի հյուպատոս գրանցված է միայն մեկ անձ՝ Ուգո Ռայմոնդուսը¹⁰: Քիչ չեն դեպքերը, երբ հարավ-եվրոպական քաղաքներն Արևելքում Կիպրոսի, Կիլիկյան Հայաստանի, իսկ երբեմն էլ խաչակրաց նավահանգիստների համար ունենում էին մեկ ընդհանուր հյուպատոս: Ուստի, չենք բացառում, որ Կիպրոսում հանգրվանած վերոնշյալ պաշտոնյաները կարգավորում էին նաև Կիլիկյան Հայաստան այցելող իրենց հայրենակիցների հետ ծագած զանազան խնդիրները: Այս տեսակետը կարելի է որոշ չափով հիմ-

⁸ Langlois V. Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, typographie arménienne de Saint-Lazare, Venise, 1863, p. 164-165; Бяцеров Ю. Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море (Պատմա-քաղաքական հանդես, 1970, N 3, էջ 79-80).

⁹ Reyerson K., նշվ. աշխ., էջ 38, 40-41; Reyerson K. Business, Banking, and Finance in Medieval Montpellier, Toronto, 1985, p. 14.

¹⁰ Balard M. Notai genovesi in Oltremare, Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296 - 23 giugno 1299), Genova, 1983, A., N 103, 104, 105, 146. Polonio V. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300 - 3 agosto 1301), Genova, 1983, N 50.

նավորել՝ ուսումնասիրելով Գիպրոսում ջենովացի նոտար Լամբերտո դե Սամբուչետոյի կազմած՝ արժեքավոր տեղեկություններով հարուստ մի քանի գործեր: 1300 թ. հուլիսի 30-ին Ֆամագուստայում Նարբոնայի վերոհիշյալ հյուպատոս Բեռնարդո Ֆաքսիտը մի խումբ նարբոնացիների հետ մասնակցում էր մի առևտրական ձեռնարկի, որը պետք է իրականացվեր Այասում¹¹: Կրկին Ֆամագուստայում 1301թ. մայիսի 30-ին ձևակերպված մի պայմանագրում ասվում է, որ արդեն հանգուցյալ Բեռնարդո Ֆաքսիտի գործընկեր և անդրծովյան երկրներում նրա ունեցվածքի հավաքագիր նշանակված Բեռնարդո Բնարդուսը նարբոնացի Գվիլելմո Ռեբոլլուսին և Ջիովաննի Ջիբերտուսին հանձնարարում է գանձել Ֆաքսիտի կողմից նախկինում պարտք տրված 2797 հայկական նոր դրամ¹² (այսուհետև՝ հնդ) գումարը, որի պարտապանը ոչ այլ ոք, քան Հայոց արքա Հեթում Բ-ն¹³ էր: Մի քանի ամիս անց՝ հոկտեմբերի 2-ին, Բնարդուսը, նարբոնացի 4 այլ պրոկուրատորների միջոցով ստացել էր 2797 հնդ-ին համարժեք 754 սպիտակ բյուզանդ (այսուհետև՝ սբ)¹⁴ գումարը, որը Գիլիկյան Հայաստանի արքայի անունից նրանց փոխանցել էր Լորենցո Դեուսայուդա անունով ևս մի նարբոնացի: Այդ նույն օրը Բեռնարդո Բնարդուսը դարձյալ Լորենցո Դեուսայուդայի միջոցով Հեթում Բ-ին խոստանում է հատուցել Բեռնարդո Ֆաքսիտի վերցրած 600 հնդ-ի պարտքը¹⁵: Դ. Աբուլաֆիան նույնիսկ կարծիք է հայտնում, որ Ֆաքսիտը, հավանաբար, մահացել է Գիլիկյան Հայաստանում¹⁶: Չի բացառվում, որ վերոհիշյալ նարբոնացիների որոշ մասը հրեական ծագում է ունեցել, քանի որ XII-XIV դդ.

¹¹ Desimoni C. Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto // Archives de l'Orient latin, t. II, Paris, 1884, p. 105-106..

¹² Հայկական նոր դրամը սկսել է հատվել Լևոն Բ-ի գահակալության շրջանում: Այն Գիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում ամենից շատ օգտագործված դրամական միավորներից էր. դրանք 2,9գ կշռով արծաթյա դրամներ էին: Հետագայում՝ XIV դ. առաջին քառորդում, նոր դրամի արծաթի պարունակությունը նվազեցվել է, որի հետ միաժամանակ այն սկսել է արժեզրկվել (Ղ. Ալիշան, Միսուան, Համագրություն Հայկական Գիլիկիայի և Լևոն Մեծագործ, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 385, Պտուկեան Զ., Գիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 58-59):

¹³ Սկզբնաղբյուրում նշված չէ, թե խոսքը որ արքայի մասին է, սակայն հայտնի է, որ 1301 թ. Հեթում Բ-ն արդեն վերահաստատվել է Հայոց գահին: Թեև նույն՝ 1301 թ. Հեթում Բ-ն գահակից-թագավոր էր հռչակել Լևոն Գ-ին, սակայն վերջինս այդ ժամանակ ընդամենը 11 կամ 12 տարեկան էր, ուստի կարծում ենք, որ նա չէր կարող նման առևտրական գործարքների մեջ մտնել օտարերկրյա վաճառականների հետ (Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 360-366: Տե՛ս նաև Polonio V. Notai genovesi in Oltremare, N 389):

¹⁴ Գիպրոսի թագավորության հիմնական դրամական միավորը՝ սպիտակ կոչված ոսկե բյուզանդը կշռել է 3,87 գր: Ըստ Ղ. Ալիշանի՝ 27 սպիտակ բյուզանդին համարժեք էր 100 հայկական նոր դրամը (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 383-385):

¹⁵ Pavoni R. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio - 27 ottobre 1301), Genova, 1982, A., N 178, 179.

¹⁶ Abulafia D. Narbonne, the Lands of the Crown of Aragon and the Levant Trade 1187-1400 // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XIV, p. 192-193.

Նարբոնայի միջազգային առևտրային կապերում կարևոր դերակատարում ունեն այնտեղ հաստատված՝ Եվրոպայի հրեական խոշորագույն համայնքներից մեկը¹⁷: Վերոնշյալ փաստերից կարելի է միայն եզրակացնել, որ Նարբոնայի վաճառականներն ակտիվ առևտուր են արել կիլիկյան քաղաքներում: Վկայություններ կան նույնիսկ Կիլիկյան Հայաստանում բնակություն հաստատած նարբոնացիների մասին. 1299 թ. մայիսի 23-ին Ֆամագուստայում ձևակերպված հանձնարարականում հիշատակված են նարբոնացիներ Պոնսիուս դե Տրինյակոն և նրա վստահված անձ, Կիլիկյան Հայաստանի *habitor* Գվիլելմո դե Վադելը [*procuratorem Guillelmum (de Vadel) de Nerbona, habitorem Ermenie*]¹⁸:

Կիլիկիայի հարավային հրվանդան Ջեֆարիոնից (Ջեփիուդիոն) դեպի հյուսիս-արևելք գտնվող կղզյակներից մեկը դեռևս միջնադարից անվանել են Պրովենցալ. «կայանս և նաւամատոյցս եղեալ առ պայազատութեամբ մերայոցս՝ վաճառականացն Մոնբելիէի և այլոց Փռանկաց Բրովանս նահանգի նոցին»¹⁹: Շատ ավելի արտոնյալ կարգավիճակ ունեին Մոնպելիէի վաճառականները: Ֆամագուստայում 1299 թ. հունիսի 23-ին գրաված երկու գործարքում հիշատակված է Պեդրո դե Պոդիոն, որը եղել էր մոնպելիէցի առևտրականների հյուպատոսը Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում (*[Petro] de Po[dio] de Montepessu[lano], consuli in [Cipro et Ermenie] hominum dicti loci de Monte[pesu]lano*)²⁰: Մա բացառիկ հիշատակություններից է Մոնպելիէի հյուպատոսի մասին ոչ միայն Կիլիկյան Հայաստանում, այլև Կիպրոսում: Երկու սկզբնաղբյուրում էլ դե Պոդիոյի առևտրական գործունեությունն առնչվում է Կիլիկյան Հայաստանի հետ: Վ. Լանգլուան Մոնպելիէի քաղաքային արխիվից երևան է հանել հույժ կարևորություն ունեցող երկու փաստաթուղթ, որոնք Կիլիկիայի հայկական պետության թագավորներ Օշինի և նրա որդի Լևոն Դ-ի՝ 1314 և 1321 թթ. մոնպելիէցի վաճառականներին շնորհած երկու արտոնագրերն են: Ընդ որում, պահպանվել են թե՛ հայերենով և թե՛ հին ֆրանսերենով կնքված օրինակները: Արտոնագրերի բովանդակությունը գրեթե նույնն է. առաջինի տեքստի մեծ մասը վերաբերում է Օշին արքայի հրամանին՝ ուղղված Կիլիկյան Հայաստանի պոռքսիմոս²¹ Օշին Եհանենցին, որով մոնպելիէցի վաճառականների համար սահմանվում էր 2 % տարանցիկ մաքսատուրք. «Ի թագաւորական բարձր հրամանաց՝ գիտացիր պարոն Աւշին Եհանենց պո[ռքսիմ]ոս, որ կու համենք որ Մոնբուզլերցի վաճառականք, զոր կան ի մեր աշխարքս ի յԱյաս ու զոր ի յայսդի ի հետ

¹⁷ Levasseur E., նշվ. աշխ., էջ 156:

¹⁸ Balard M., նշվ. աշխ., A., N 146.

¹⁹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 325: Rey E. Les périples des cotes de Syrie et de la Petite Arménie, // Archives de l'Orient latin, t. II, Paris, 1884, p. 353.

²⁰ Balard M., նշվ. աշխ., A., N 159, 160.

²¹ Պոռքսիմոսը Կիլիկյան Հայաստանում պետության ֆինանսները կառավարող գործակալը կամ նախարարն էր (Բոնուգյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, Ե., 1973, էջ 75, 277-279):

զան ու գնան ի վաճառականություն ի մեր աստուածապահ աշխարքս ի յԱյաս, նայ զիրենք այս կերպովս տաս խալսել ի յԱյասոյ բայժտունն, որ ի ծախելն և ի գնելն ի հարոյրն երկուք մէն տան»։ Մյուս շնորհագրով Լևոն Դ-ն պարզապէս վերահաստատել էր իր հոր կողմից տրված արտոնությունները. «...Մունբուզերցի վաճառականք բերին առ մեզ զայն համանքն, որ մեր ի Քրիստոս հանկուցեալ հայրն է պարզել իրենց, որ տեսաք. որ իրենք զոր կան ի յԱյաս ու զոր այլ զան իր հետ ու ի հետ մեր աստուածապահ աշխարքս...»²²։ Ուշագրավ են երկու արտոնագրերում շեշտված հետևյալ հատվածները՝ «...զոր կան ի մեր աշխարքս ի յԱյաս ու զոր ի յայտի ի հետ զան ու գնան...»։ Այսինքն, բացի Կիլիկիայում առևտուր անող վաճառականներից, մոնպելիեցիները նաև տնական բնակություն էին հաստատում Այասում։ 1335 թ. (կամ 1336 թ.) Կիլիկյան Հայաստան այցելած Պեգոլոտտին վկայում է, որ պրովանսցիներն ապրանքների ներմուծման և արտահանման համար այնտեղ վճարում էին 2 % մաքսատուրք²³։ Եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակամիջոցում Մոնպելիեն Մայորկայի թագավորության կազմում էր և, ավելին, այն պրովանսյան քաղաքներից չէր, այլ գրտնրվում էր Լանգեդոկ երկրամասի սահմաններում, ապա կարելի է եզրակացնել, որ Պեգոլոտտին նկատի է ունեցել ընդհանրապես հարավֆրանսիացի վաճառականներին։ Հ. Ֆինկեի հրատարակած՝ Արագոնի թագավորությանը վերաբերող սկզբնաղբյուրների ժողովածուում գետեղված է Օշին արքայի մի հրամանը, որով Կիլիկյան Հայաստան այցելող կատալոնցիներին երաշխավորվում էին այն նույն արտոնությունները, որ այնտեղ ունեին պրովանսցիներն ու նարբոնացիները²⁴։ Անշուշտ, այդ արտոնություններից ամենակարևորը տարանցիկ մաքսատուրքի նվազեցումն էր։ Ուստի, կարելի է ենթադրել, որ առնվազն Օշին արքայի գահակալության շրջանում թե՛ նարբոնացիների, և թե՛ պրովանսցիների համար սահմանվել էր 2 % մաքսատուրք։ Ըստ վերը բերված սկզբնաղբյուրների՝ կիլիկյան քաղաքներում Հարավային Ֆրանսիայից ժամանած վաճառականները գնում կամ վաճառում էին թանկարժեք մետաղներ և քարեր, մետաքս, համեմունքներ, բամբակ, ինչպես նաև եվրոպական բազմատեսակ ապրանքներ։

Իհարկե, XIII-XIV դդ. Կիլիկիայի հայկական պետության միջազգային առևտրական հարաբերություններում առաջնահերթ տեղում են եղել Վենետիկի և Ջենովայի հետ կապերը, սակայն վերոնշյալ բազմաթիվ տեղեկությունները, որոնք առկա են հավաստի տարատեսակ սկզբնաղբյուրներում, հաստատում են, որ այդ հարաբերությո-

²² Langlois V., նշվ. աշխ., էջ 178-179, 185-186: Микаелян Г. История Куликуйского Армянского государства, Е., 1952, с. 392-393. Germain A. Histoire du commerce de Montpellier, p. 10-11. Abulafia D. A Mediterranean Emporium: The Catalan Kingdom of Majorca, Cambridge, 2002, p. 182, 201.

²³ Francesco Balducci Pegolotti, նշվ. աշխ., էջ 60:

²⁴ Finke H. Acta Aragonensia, Quellen zur deutschen, italienischen, französischen, spanischen, zur Kirschen- u. Kulturgeschichte aus der diplomatischen Korrespondenz Jaymes II (1291-1327), B. II, Berlin, Leipzig, 1908, p. 741-742..

յունների մեջ կարևոր դերակատարում են ունեցել նաև Հարավային Ֆրանսիայի քաղաքներից Կիլիկիա այցելող վաճառականներ: Փաստորեն, նրանք ակտիվ գործարքների մեջ էին նույնիսկ Կիլիկյան Հայաստանի թագավորների հետ: Սակայն արդեն 1330-ական թվականների վերջից, երբ Կիլիկյան Հայաստանի գլխավոր նավահանգիստ Այասն անցավ մամլուքների տիրապետության տակ, եվրոպացի, այդ թվում նաև հարավֆրանսիացի վաճառականների գործունեությունը կտրուկ անկում ապրեց:

ТОРГОВАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КУПЕЧЕСТВА ЮЖНОФРАНЦУЗСКИХ ГОРОДОВ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ (XIII – XIV ВВ.)

ГЕВОРГЯН 3. Г.

Резюме

Со второй половины XIII века Киликийская Армения вступила в экономические отношения с королевством Арагона, а также с городами южной Франции. В Киликию прибывали купцы из Монпелье, Марселя, Нима, Нарбонны и иных французских городов. Их имена сохранились в нотариальных актах, составленных в главном порту Киликийской Армении, в Айясе (Lajazzo, Layas и т. д.). Марсельские купцы прибывали в Киликию на собственных судах, а купцы из Нарбонны подписывали прямые торговые контракты с самим царем Киликийской Армении. Согласно некоторым данным, купцы из Нарбонны надолго обосновались в Киликии. Купцам из Монпелье были предоставлены армянскими царями две торговые привилегии в 1314 и 1321 гг., и небезынтересно, что к северо-востоку от южного мыса Киликии есть островок, который в средние века назывался "провансальским".

COMMERCIAL ACTIVITIES OF THE MERCHANTS FROM THE CITIES IN SOUTHERN FRANCE IN CILICIAN ARMENIA (XIII – XIV CENTURIES)

Z. GEVORGYAN

Abstract

Since the second half of the 13th century, Cilician Armenia had established commercial and economical relations with the Kingdom of Aragon and with the cities of Southern France. Merchants from Montpellier, Marseilles, Nîmes, Narbonne and from other South-French cities arrived in Cilicia. Their names

registered in the notary acts are made in the main port of Cilician Armenia in Laiazzo (Ayas, Lajazzo, Layas, etc.). The Marseillais arrived in Cilicia in their own ships and the Narbonnais merchants signed direct commercial contracts with the King of Cilician Armenia. There is evidence about Narbonnais being inhabitants of Cilician Armenia. Merchants from Montpellier, who were twice granted commercial privileges by the Armenian Kings in 1314 and 1321, had a more secure position in Cilician Armenia.